ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<12>> հուլիսի 2022թ. N ՄՈ/406-2022

ք. Արմավիր

«ԲԱՄԲԱԿԱՇԱՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԳԱՅԱՆԵ ՊԱՐՈՆՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 164-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Գայանե Պարոնյանի 2022 թվականի հուլիսի 11-ի դիմումը.

որոշում եմ՝

1. «Բամբակաշատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գայանե Պարոնյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդը 2022 թվականի հուլիսի 20-ից օգոստոսի 23-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Գայանե Պարոնյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Բամբակաշատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Բամբակաշատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Լորետա Հարությունյանին:
3. «Բամբակաշատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Լորետա Հարությունյանի աշխատավարձի վճարումը 2022 թվականի հուլիսի 20-ից օգոստոսի 23-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Գայանե Պարոնյանին աշխատանքի մեջ համարել 2022 թվականի օգոստոսի 24-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 12.07.2022 12:46:27 GMT+4

Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

ՄԱՐԶՊԵՏ՝ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ